ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան **«28» նոյեմբերի 2025թ.**

2025 թվականի նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստը՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով։

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին։

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.
2. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում.
3. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2026 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.
4. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում.
5. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ, 3-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

Քվեարկությանը մասնակցեցին՝

Դ. Խուդաթյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)

Կ. Ցուցուլյան- փրկարար ծառայության տնօրեն - ներքին գործերի նախարարի տեղակալ

Տ. Հակոբյան- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Տ. Դադունց- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ն. Հովակիմյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ե. Վարդանյան- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Ս. Թովմասյան- Կադաստրի կոմիտեի ղեկավար

Տ. Քեյան- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Տ. Բաբայան- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Դ. Սողոմոնյան- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Վ. Հարությունյան- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի դեկանի ժ/պ, դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ա. Ավանեսյանը- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ:

Քվորում առկա է:

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «11» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Օրակարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «11» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2026 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

Օրակարգում ընդգրկված 3-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «11» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական

մարմնի որակի ապահովման վարչության 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Օրակարգում ընդգրկված 4-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «11» կողմ «0» դեմ համամասնությամբ քննարկեց և առարկություն չներկայացրեց ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններին:

Օրակարգում ընդգրկված 5-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը էլեկտրոնային քվեարկությամբ, ձայների «11» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ, 3-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատման նախագիծը:

Կառավարման խորհրդի նախագահ՝

12/1/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. Խուդաթյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Վ. Պոկացյան**